ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գավառի պետական համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ

ՀԱՅՈՑ ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ ԵՎ ՍԱՆԱՏՐՈՒԿ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՁԵՐԻ ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ)

Հոդվածում քննության է առնվում հայոց պատմագրության մեջ տեղ գտած և լայն ճանաչում ստացած կեղծ տեսակետն այն մասին, որ Սանատրուկ թագավորը եղել է Տրդատ Առաջին թագավորի որդին և թագավորել է նրանից հետո, մ.թ. 75/78-110 թթ.: Իրավաբանական և տրամաբանական միջոցներով ու եղանակներով[1] ապացուցվում է, որ նրանք նույն անձինք են: Փաստվում է նաև, որ նախաքրիստոնեական Հայաստանում գործել է զրադաշտական իրավական սիստեմը (համակարգը):

Հիմնաբառեր- *Տրդատ Առաջին, Սանատրուկ, Ներոն, Գառնիի հունարեն արձանագրություն, Մեծ Հայք, Պարթևաստան, Հռոմեական կայսրություն:*

Հայ պատմագրության մեջ մեծ շփոթություն է տիրում Տրդատ (Տիրիդատ) Առաջին և Սանատրուկ հայոց թագավորների պատմականության ու անձերի շուրջ: Զարմանք է հայտնվում, թե ինչու՞ Մովսես Խորենացին Տրդատ Առաջին Արշակունու նման նշանավոր թագավորի մասին որևէ տեղեկություն չի հաղորդում, և դա այն դեպքում, երբ այս թագավորը և նրա եղբայր Պարթևական տերության արքայից արքա Վաղարշակ (Վաղարշ, Վոլոգեզ) Առաջինը Մեծ Հայքի պետության և հայ ժողովրդի կյանքում խիստ կարևոր դերակատարություն են ունեցել: Նրանք իրենց գործունեությամբ նշանակալի հետք են թողել ոչ միայն Իրանի և Հայաստանի, այլև Հռոմեական կայսրության պատմության մեջ: Կարելի է պնդել, որ 1-ին դարի երկրորդ կեսին, շուրջ 20 տարի, Հռոմեական կայսրությունն առավելապես զբաղված է եղել այս թագավորների և նրանց ներկայացրած պետությունների հետ հարաբերությունները կարգավորելու խնդրով: Նրանց գործունեության մասին տեղեկություններ կան Տակիտոսի «Տարեգրություններ» («Անալներ») և Դիոն Կասիոսի «Հռոմեական պատմություն»[2] աշխատություններում: Տիգրան Երկրորդից հետո Տրդատ Առաջինը եղել է Մեծ Հայքի ամենահայտնի և արևմտյան հեղինակների վրա վառ տպավորություն թողած թագավորը: Այսքանից հետո հնարավո՞ր է արդյոք, որ Մովսես Խորենացու նման պատմիչն այս թագավորի ու նրա գործունեության մասին տեղյակ չլիներ, և նրա մասին տեղեկություններ չհայտներ: Իսկ Մ. Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ իսկապես մ.թ. 1-ին դարում Մեծ Հայքում թագավորած Տրդատ անունով թագավոր չի հիշատակում: Նրա փոխարեն հիշատակվում է մոտավորապես այդ նույն ժամանակ թագավորած Սանատրուկ անունով մի թագավոր:

Հայ և օտար պատմաբաններն այդ առեղծվածը պարզելու համար գնացել են հեշտ և, կարծում ենք, ոչ գիտական ուղիով: Նրանցից ոմանք նույնացրել են ոչ թե Տրդատ Առաջինին և Սանատրուկին, այլ Մ. Խորենացու կողմից որպես մ.թ.ա. 2-րդ դարում Հայաստանի թագավոր ներկայացված Վաղարշակ Առաջին Արշակունուն և Տրդատ Առաջինին[3]: Մեկ այլ հեղինակ Տրդատ Առաջինին նույնացրել է Երվանդ թագավորի հետ[4], որին Մ. Խորենացին ներկայացնում է որպես Սանատրուկ հայոց թագավորին անմիջականորեն հաջորդած ապօրինի թագավոր: Ա. Գարագաշյանը և Մ. Աբեղյանը նրան նույնացրել են Արտաշես Բ-ի (իրականում՝ Արտաշես Գ-ի) հետ, բայց որը, ըստ Մ. Խորենացու, եղել է Սանատրուկ թագավորի որդին և թագավորել Երվանդից հետո[5]: Ճիշտ չեն թվում նաև այն հեղինակները, որոնք նրան համարում են ոչ միայն ամբողջ Մեծ Հայքի թագավոր, այլև պարթևական հարստության հիմնադիրն այնտեղ[6]:

Բանավեճի առարկա է նաև Տրդատ Առաջինի (և Սանատրուկի) թագավորման ժամանակաշրջան հարցը: Լեոն գտնում է, որ Տրդատ Առաջինը թագավորել է 62-100 թվականներին և նրան հաջորդել է Աշխադարը: Իսկ Սանատրուկ անունով հայոց թագավոր, ըստ նրա, Մեծ Հայքում թագավորել է ոչ թե

www.journal.lawinstitute.am

1-ին դարի կեսերին, այլ «մ.թ. 190 թվականից, 6 տարի ժամկետով»[7]: Ն. Ադոնցը նույնպես Սանատրուկին համարում է 2-րդ դարի վերջում թագավորած և ասում, որ. «Նա Հայոց այն թագավորն է, որին իր մոտ կանչեց Կարակալլա կայսրը (211-217 թթ.) իբր, նրան ապստամբ որդիների հետ հաշտեցնելու համար…»[8]: Դա միանգամայն սխալ տեսակետ է: «Հայ ժողովրդի պատմության» քառահատորյակի հեղինակների կարծիքով էլ Տրդատ Առաջինը Մեծ Հայքում թագավորել է 66-78 թթ., իսկ նրա «որդի» Սանատրուկը՝ 78-110 թվականներին[9]: Հ. Մարկվարտը, իր հերթին, գտնում է, որ Սանատրուկ անունով հայոց թագավոր իսկապես գոյություն է ունեցել, բայց նա ու նրա որդի Վաղարշը թագավորել են Տրդատ Առաջինից անմիջապես հետո, 1-ին դարի վերջերին և 2-րդ դարի սկզբներին[10]: Հ. Մանանդյանը նույնպես կարծում է, որ Տրդատ Առաջինը թագավորել է 66-75 թթ., իսկ նրա «որդի» Սանատրուկը՝ 75-110 թթ.[11], և որ Սանատրուկը «նրան հաջորդած պետք է լիներ 75 և 110 թթ. միջև»[12]: Նա Տրդատ Առաջինի մահվան հավանական ժամանակը համարում է 75 թվականը և նշում, որ «Միանգամայն հավանական կարելի է համարել, որ նրան (Տրդատ Առաջինին - Ս.Խ.) հաջորդած պիտի լիներ (75 և 110 թթ. միջև) Սանատրուկ թագավորը, որի թագավորման ժամանակաշրջանը պատմագետների մեծագույն մասը թյուրիմացաբար տարել է 2-րդ դարի վերջերը»: Այնուհետև, Հ. Մանանդյանը, հետևելով Դիոն Կասիոսի երկի համապատասխան հատվածի (LXXV 9.6) ծանոթագրություններին[13], գտնում է նաև, որ «Սանատրուկը և նրա որդին՝ Վաղարշը, ոչ թե Սեպտիմիոս Սեներոս կայսեր (193-211 թթ.) **ժամանակին է վերաբերում**, ինչպես պատմագրության մեջ ենթադրվում է, այլ Տրայանոս կայսեր (98-117 թթ.) վերջին տարիներին, և, հավանորեն, 116 թվականին»: Այնուհետև նույն տեղում Հ. Մանանդյանը բերում է Դիոն Կասիոսի «Հռոմեական պատմության» վերոնշված հատվածը (LXXIV 9. 6), որում Դիոն Կասիոսը պատմում է հետևյալը. «Երբ Վաղարշը՝ Սանատրուկի որդին, իր զորքերը շարեց Սեներոսի զորքերի առջև և մինչև ճակատամարտ տալը (հռոմեացիների դեմ) խնդրեց զինադադարի մասին, ապա ստացավ այն: (Տրայանոսը) նրա մոտ ուղարկեց դեսպաններ և խաղաղության հաստատման համար նրան նվիրեց Հայաստանի մի մասը»[14]: Դիոն Կասիոսի այս տողերից և դրանց կապակցությամբ նրա գրքի խմբագիրների տողատակի ծանոթագրությունից պարզ է դառնում, որ Սանատրուկի մասին «աղոտ հիշողությունները» վերաբերում են Պարթևստանի թագավոր Խոսրով Առաջինի (109-128 թթ.) եղբայր Միհրդատի որդի Սանատրուկին, և ոչ թե հայոց Սանատրուկ թագավորին: Պարթև Միհրդատի որդի Սանատրուկը երբեք հայոց թագավոր չի եղել, բայց ակտիվորեն և հաջողությամբ պայքարել է Տրայանոսի զորքերի դեմ, սակայն սպանվել է իր ազգականների ձեռքով: Նրա որդի Վաղարշն էլ, որն ըստ Դիոն Կասիոսի վերոնշյալ տեղեկության, պատրաստվում էր ճակատամարտել Տրայանոս կայսեր զորավար Սեներոսի դեմ (և ոչ թե Սեպտիմիոս Սեներոս կայսեր), ապագա հայոց Վաղարշ Առաջին (117-140/141 թթ.) թագավորն է:

Լ. Շահինյանը նույնացնում է Հայոց Տրդատ Առաջին և Երվանդ թագավորներին, պատմական համարում նաև Երվանդին հաջորդած Արտաշես թագավորին, և պնդում, որ Սանատրուկ անունով հայոց թագավոր չի եղել: Միաժամանակ նա ենթադրում է, որ «Արտաշես Բ Արշակունու տեղը ժամանակագրորեն զբաղեցնող «Հայոց թագավորները (Սանատրուկ՝ 88-110, Աշխադար՝ 110-113, Պարթամասիր՝ 114, Վաղարշ Ա՝ 117-141) սոսկ պատահական, դեռևս անորոշ տեղեկությունների ու շփոթի հետևանք են…:»[15]:

Գ. Սարգսյանն իր «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» աշխատության մեջ Տրդատ Առաջինին համարում է Մեծ Հայքում Արշակունիների հարստության հիմնադիրը և գտնում, որ Մ. Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ նրան չի հիշատակել այն պատճառով, քանի որ նա «ժողովրդի հիշողության մեջ Արտաշես է դարձել»[16]: Նա գտնում է նաև, որ Սանատրուկ անունով հայոց թագավոր եղել է, և որ նա հաջորդել է Տրդատ Առաջինին[17]:

«Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի 1-ին հատորում Տրդատ Առաջինին և նրա գործունեությանը ընդարձակ անդրադարձ է կատարված: Եվ դա հիմնականում՝ Տակիտոսի և Դիոն Կասիոսի աշխատությունների հիման վրա[18]: Հայտնվում է, որ «Հայոց թագավոր Տրդատ Ա-ի մահից հետո հայոց գահն է զբաղեցնում Սանատրուկը: Պիտի ենթադրել, որ Տրդատ Ա-ի մահից հետո պարթևների առաջարկով Հռոմը հաստատել էր սրան»[19]: Այնուհետև Տրդատ Առաջինը նույնացվում է Վաղարշակ Առաջինի հետ, և համարվում Մեծ Հայաստանում Արշակունյաց դինաստիայի հիմնադիր: Նշվում է նաև, որ իբր, ըստ Մ. Խորենացու «Վաղարշակը (հիմա՝ Տրդատ Ա) թագավորել է 22 տարի: Եթե Տրդատ Ա-ի թագավորության պաշտոնական թիվը վերցնենք 66 թվականը և ավելացնենք 22 տարի, կստանանք 88 թվականը, որ պիտի լիներ նրա մահվան տարեթիվը: Նույն տարիներին պետք է թագավորեր Սանատրուկը, ով 91 թվականին, այսինքն՝ իր գահա-

կալության երրորդ տարում դարձել է նաև Եդեսիայի թագավոր, և մնացել որպես այդպիսին մինչև 109 թվականը»[20]: Ենթադրություն է արվում նաև, որ Տրդատ Առաջին Արշակունին «թերևս մահացել է Բակուրակերտ (Փիլադելփիա) ավանում, Մարանդ քաղաքի մոտակայքում, 88 թվականին»[21]:

Պատմական ճշմարտությունն այն է, որ Տրդատ Առաջին Արշակունին և Սանատրուկը նույն անձն են: Եվ Մովսես Խորենացին իր երկում Տրդատ Առաջինին հիշատակում է միայն Սանատրուկ անունով (պատվանունով): Եվ նա ոչ մեկին, մանավանդ՝ Վաղարշակ Առաջինին և Արտաշես Առաջինին Տրդատ Առաջինի հետ չի շփոթում: Նա որոշակիորեն Սանատրուկից տարբերում է նաև նրան հաջորդած Երվանդ և Արտաշես թագավորներին:

Պատմահայրը «Սանատրուկ» անունը համարում է նրա դայակ Սանոտի անունից առաջացած: Նա պատմում է, որ Աբգար թագավորի քույր Ավդեն իր շքախմբով դեպի Հայաստան ճամփորդելիս Կորդվաց լեռներում ձնաբքի մեջ է ընկել: Փոքրիկ Սանատրուկին, որը գտնվելիս է եղել Ավդեի շքախմբում, ցրտահարումից փրկել է նրա դայակ Սանոտը՝ հայոց իշխան Բյուրատ Բագրատունու քույրը և Խոսրեն Արծրունու կինը, մի սպիտակ շան օգնությամբ: Սանոտի անունով էլ, իբր հրաշքով կատարված այդ փրկության առթիվ, նա կոչվել է Սանատրուկ՝ «Սանոտի տված»[22]:

Հր. Աճառյանը Սանատրուկ անունը՝ հետևելով Մ. Խորենացուն, ստուգաբանում է որպես «Սանոտի տուրք», կարծելով, որ նրա անունը «Սանոտ» անունից է ծագել: Նա նշում է նաև, որ այդ անունն ունի պարսկական ծագում[23], բայց փաստորեն չի ստուգաբանում: Այն չի ստուգաբանում նաև Ֆ. Յուստին իր «Իրանական անձնանունների բառարանում»: Նա բավարարվում է նշելով, որ դա պարթևական անուն է և թվարկում մի շարք թագավորների, որոնք կրել են Սանատրուկ անունը: Նրանց թվում հիշատակվում է նաև հայոց Սանատրուկ թագավորը[24]: Մեր կարծիքով, այդ անունն իսկապես պարթևական ծագում ունի, և այն նշանակում է «Արևի տված»: Սանոտ անունը նույնպես պետք է ստուգաբանել որպես «Արևոտ» կամ «Արևի Տուրք» (տված): **Արև նշանակող «սան» արմատը պահպանվել է արիական կամ հնդեվրոպական որոշ լեզուներում՝ գերմաներեն «Sonne», անգլերեն «sun», ռուսերեն «солнце» ձևերում:**

Գուցե հրաշքով փրկվելու հետևանքով էլ նրան այդ ժամանակ կնքել են հայկական որևէ զրադաշտական տաճարում և տվել այդ երկրորդ անունը: Գուցե նաև այդ անունը նրան շնորհել է պարթևների թագավորներին կից և «թագավորներ դնող» ազգականների ու իմաստունների ատյանը (խորհուրդը)[25]: Եվ դա այն մեծագործությունների համար, որոնք նա կատարել է հայոց թագավոր և զրադաշտական մոգպետների մոգպետ եղած ժամանակ՝ աչքի ընկելով նոր սրբավայրեր, տաճարներ ու քաղաքներ կառուցելու, ավերվածները վերակառուցելու, զրադաշտական իրավունքը, արարողակարգերը հետևողականորեն վերականգնելու և մարդկանց կյանքը, որը խաթարվել էր հռոմեական արշավանքների հետևանքով, սովորական հուն մղելու համար: Այժմ այդ հարցերին դժվար է պատասխանել: Բայց որ զրադաշտական թագավորները ունեցել են մի քանի անուններ, դա էլ պատմական փաստ է: Այդ հարցում նրանք հետևել են աստվածների օրինակին: Օրինակ՝ Արամազդ աստվածահայրն ունի 72 անուն՝ թվարկված Ավեստայի «Օրմազդյաշտում»[26]: Տրդատ Առաջինն էլ, որպես աստված և աստվածների «դիցախառն» շառավիղ հանդիսացող թագավոր[27], պետք է ունենար շատ անուններ, որոնցից մեկն էլ եղել է Սանատրուկ անունը և այն Արշակունիների արքայանուններից է:

Տրդատ Առաջինի (Սանատրուկի) զրադաշտական քրմապետ և մոլի զրադաշտական լինելը (հետևաբար՝ նման անուն ունենալու հնարավորությունը) հաստատում է նաև Տակիտոսը: Վերջինիս հաղորդմամբ Տրդատ Առաջինի ավագ եղբայր՝ պարթևական Վաղարշ Առաջին արքայից արքան, 63 թվականի գարնանը Ներոն կայսրին հղած նամակով տեղեկացրել է, որ հանուն ընդհանուր խաղաղության ինքը համաձայն է, որ Տրդատը գնա Հռոմ՝ Ներոնից թագ ստանալու համար, բայց քրմապետական պարտականությունները նրան թույլ չեն տալիս դա անել[28]: Բայց Ներոնը՝ ցանկանալով ամեն գնով ապահովել Հռանդեայի պայմանագրի կնքումը (որով փաստորեն հիմք էր դրվում պարթև պետության քայքայմանը)՝ ձգտել է Տրդատին հրապուրել և տանել Հռոմ[29]: Եվ երբ Հռանդեայի պայմանագրով[30] փոխհամաձայնություն է ձեռք բերվել (Հռոմի կողմից պարտադրվել է), որ Ներոնից թագ ստանալու համար (Հռանդեայի պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար) Տրդատ Առաջինն անպայման պետք է գնա Հռոմ, ապա պարթևա-հայկական կողմը պայման է դրել, որ հայոց թագավորը Հռոմ գնա ցամաքային ճանապարհով: Եվ որ հռոմեական կողմը պետք է հատուցի ճանապարհորդության ծախսերը: Ներոնը դրան անմիջապես համաձայնել է:

Այդ ուղևորության մասին Պլինիոս Կրտսերը (61-111/113 թթ.) գրում է (Ա. Գարագաշյանի

թարգմանությամբ) հետևյալը. «Տրդատէս մոգ եկեալ էր գտանել զնա (զՆերոն) ի Հռոմ, բերեալ յանձին իւրում զձաղանս Հայոց աշխարհին, և վասն այսորիկ իսկ կոխէր զնահանգսն ընդ որս անցանէր: Չէր կամեցեալ երթալ ընդ ծով, զմոգքն արգելեալ համարին թքանել ի ծով և աւելորդօք ինչ կարեւորօք մարդկութեան զտարրն զայն պղծել: Ունէր ընդ իւր մոգս, առնէր զՆերոն միջամուխ ի խնջոյսն մոգականս. սակայն կայսրն որ տայր նմա թագավորութիւն՝ չկարէր ընդունել ի նմանէ զարուեստ մոգութեան»[31]:

Հռոմ գնալը խելամիտ էր միայն ծովով: Բայց ծովի ջուրը, ինչպես ամեն տեսակի ջուր, ըստ զրադաշտական կրոնի (իրավունքի), սրբազան տարերք է համարվել, և զրադաշտական քրմապետը չէր կարող համաձայնել ծովային ճամփորդության, քանի որ ծովով նավարկել առանց ջրի մեջ աղբ թափելու և այդպիսով այն պղծելու՝ հնարավոր չէր[32]: Իսկ ցամաքային ճանապարհով գնալը վտանգավոր էր և ծախսատար: Իրանական իրավահայտ աղբյուր հանդիսացող «Արտա Վիրապ Նամակի» 58-րդ գլխում Արտա Վիրապը դժոխքում տեսնում է մի մարդու հոգի, որն այնտեղ տառապում էր երկրային կյանքում «մեծ ջուրը», «ավազանի ջուրը» և «գնայուն ջուրը» պղծելու համար[33]: Եվ այդ սրբազան տարերքը պղծողը կարող էր դժոխք ընկնել: Դրա համար էլ Տրդատը հրաժարվել է ծովով ճամփորդել: Ծովով գնալ՝ նշանակում էր զրկվել «արդարակյաց» և «սանատրուկ» լինելուց: Դա կարող էր նաև քաղաքական հետևանքներ ունենալ: Դրա համար նա Հռոմ է գնացել ցամաքային ճանապարհով: Այս ամենը նշանակում է, որ Տրդատ Առաջինը՝ լինելով մոլի զրադաշտական, քրմապետ, իսկապես կրել է Սանատրուկ անունը:

Մովսես Խորենացու հաղորդման համաձայն (գիրք 2, գլ. ԼԶ), Սանատրուկը (իմա՝ Տրդատ Առաջինը) վերականգնել է երկրաշարժից տուժած Մծբինը, որը եղել է նրա թագավորության մայրաքաղաքը[34]: Այդ առթիվ նա իրեն արձան է կանգնեցրել Մծբինի հրապարակում՝ դրամը ձեռքին: Դրամը խորհրդանշել է այն փաստը, որ նա իր վերջին փողերը ծախսել է Մծբինի վերականգնման վրա[35]: Երկրաշարժի հետևանքով Մծբինի կործանման իրողությունը հաստատվում է Տակիտոսի հաղորդած այն տեղեկությամբ, որ Տիբերիոս (14-37 թթ.) կայսեր իշխանության տարիներին 12 ասիական քաղաքներ կործանվել են երկրաշարժից[36]: Դրանք հիմնականում Մծբինի հարևանությամբ Սիրիայի տարածքում գտնվող հռոմեական քաղաքներն են: Տակիտոսի և Մ. Խորենացու՝ միմյանց լրացնող այս տեղեկությունները նույնպես ապացույց են հանդիսանում այն բանի, որ Մծբինը վնասվել է այդ նույն երկրաշարժից, իսկ Տրդատ Առաջին-Սանատրուկն էլ այն թագավորն է, ով վերակառուցել է երկրաշարժից տուժած Մծբինը:

Սանատրուկ-Տրդատն է նաև վերակառուցել հռոմեացիների ավերած Արտաշատը, Տիգրանակերտը, Գառնին և այլն: Արտաշատի մոտ կառուցել է ամբողջ տաճարական համալիր, որը կոչվել է Դուին-Ասաակ, ինչպես նաև Մծուրն քաղաքը[37]: Որ այս և այլ հայկական քաղաքներ վնասված են եղել պարթևական արքա Վաղարշ Առաջինի և նրա եղբայր Հայոց արքա Տրդատ Առաջինի կողմից Հռոմեական կայսրության դեմ մղած տասնամյա պատերազմի ժամանակ՝ հանրահայտ է: Հայտնի է նաև, որ Ներոն կայսրը նրան դրամական միջոցներ և արհեստավորներ է տվել՝ հռոմեացիների կողմից Հայոց ավերված քաղաքները վերականգնելու համար: Եվ նա իրացրել է այդ միջոցները՝ ըստ նշանակության: Դրանից հետո շուրջ 50 տարի Հայաստանում տիրել է խաղաղություն: Եվ 100 թվականից անմիջապես առաջ և հետո Սանատրուկ կամ այլ անունով որևէ թագավոր հայկական քաղաքներ չի վերակառուցել: Դրա կարիքը պարզապես չի եղել:

Մովսես Խորենացին Աբգարից հետո որպես Հայոց թագավորներ է հիշատակում Սանատրուկին և Աբգարի որդի Անանունին: Նա, որպես Հայոց թագավորների, չի հիշատակում Մեծ Հայքում մ.թ. 1-ին դարի կեսերին իրապես թագավորած վրացիներ Միհրդատին, Հռադամիզդին և Զենոն-Տիգրանին: Թվում է, թե այն պատճառով, որ նրանց մասին չգիտի: Սակայն ավելի հավանական է այն վարկածը, որ նրանք չեն եղել Արշակունիների հարստության ներկայացուցիչներ, հետևաբար չէին կարող թվարկվել Հայոց արքայացանկի մեջ և համարվել Հայոց օրինական թագավորներ: Դա նաև այն պատճառով, որ Տրդատ Առաջինը որպես հայոց թագավոր է օծված եղել մ.թ. 51/52 թվականներին, և թագավորել 30 տարի: Եվ այդ ընթացքում որևէ մեկը իրավաբանորեն չէր կարող կոչվել հայոց թագավոր: Այդպես է վարվում նաև Սեբեոսը, որը Աբգարից հետո որպես Հայոց թագավոր հիշատակում է Սանատրուկին՝ նրան անվանելով Աբգարի քեռորդի: Նա ևս Տրդատ Առաջինին չի ճանաչում, վրացի թագավորների մասին նույնպես չի հիշատակում, իսկ Սանատրուկից հետո էլ Հայոց թագավոր է անվանում ոչ թե Երվանդին (որպես ապօրինի թագավորի), այլ Արտաշեսին՝ վերջինիս կոչելով Սանատրուկի որդի[38]:

Մովսես Խորենացին վկայում է, որ Աբգար թագավորը Թադեոս առաքյալին ուղարկել է իր քեռորդի Սանատրուկի մոտ, որը նրա կողմից նշանակ-

ված է եղել «ի վերայ աշխարհիս և զօրացն»[39]: Հայտնի է, որ Մովսես Խորենացին այս Աբգարին, որը Աբգար Հինգերորդն է (4 թ. մ.թ.ա. - 7 մ.թ. 13?50 թթ.) և ուրիշը չէր կարող լինել[40], համարում է ամբողջ Մեծ Հայքի թագավոր: Այնինչ նա եղել է Հայկական Միջագետքի՝ Օսրոենեի կամ Եդեսիայի (Ուռհայի) ու դրա շրջակայքի թագավոր: Իսկ կարո՞ղ էր Աբգար Հինգերորդը Սանատրուկ-Տրդատին մինչև իր մահը նշանակել զորապետ և ինչ-որ տարածքի կառավարիչ: Այո, կարող էր, եթե Իրանի պարթև թագավորները ցանկանային:

Մովսես Խորենացին պատմում է նաև (2-րդ գրքի ԼԳ գլուխ), որ Թադեոս առաքյալը Եդեսիայում քրիստոնեությունը տարածելուց, թագավոր Աբգարին ու եդեսացիներին մկրտելուց հետո տեղափոխվել է թագավոր Սանատրուկի մոտ, ով ինչպես ասվեց, այդ ժամանակ Աբգարի կողմից կառավարիչ և զորապետ է նշանակված եղել: Այդ նույն ժամանակ Հռոմեական կայսրության Արևելքում (Եգիպտոս, Սիրիա, Պաղեստին և Փոքր Ասիա), ինչպես նաև Պարթևական տիրույթներում տեղի են ունեցել հրեաների և քրիստոնյաների հալածանքներ ու կոտորածներ[41]: Դրա արձագանքներից է նաև Խորենացու հաղորդածն այն մասին, որ Աբգարի որդի Անանունը կամ Մանու Հինգերորդը (50-53 թթ.) Եդեսիայում հալածել է քրիստոնյաներին՝ ոչնչացնելով Աբգար թագավորի ձեռքբերումները: Արդյո՞ք այդ ժամանակ է Տրդատ Առաջին-Սանատրուկը մահապատժել Թադեոս առաքյալին, կույս Սանդուխտին և մյուսներին, թե՞ Հռոմից վերադառնալուց հետո, ուր նա մեկնել էր 66 թվականին: Դա այնքան էլ կարևոր չէ: Նրանց հնարավոր էր մահապատժել 51-66/70 թթ., բայց միանշանակ բացառվում է այդ անձանց մահապատժի ենթարկելը 100 թվականից անմիջապես առաջ և հետո, որտեղ երբեմն տեղափոխվում է Սանատրուկի թագավորման ժամանակաշրջանը: Ընդ որում, կարևոր չէ այն հարցը, թե այդ առաքյալը առաջին, թե երկրորդ հերթի Թադեոս առաքյալն է: Ինչպես Թադեոս առաքյալն առաջին 12-ից, այնպես էլ Թադեոսը երկրորդ հերթի 70 առաքյալներից, եղել են Քրիստոսի ժամանակակիցները և առաքված են եղել Նրա կողմից[42]: Եվ նրանցից Եդեսիա և Մեծ Հայք առաքվածն էլ մահապատժվել է Տրդատ Առաջին-Սանատրուկ թագավորի կողմից:

Միայն նա կարող էր ժամանակագրական առումով լինել այն թագավորը և հայոց զրադաշտական քրմապետը, ով մահապատժի է ենթարկել առաքյալ Թադեոսին, նրա հետ էլ՝ իր դուստր Սանդուխտին և շատ այլ քրիստոնյաների: Ժամանակագրական առումով միայն նրա թագավորման ժամանակն է համընկնում Թադեոս առաքյալի (նաև Բարդուղիմեոսի) Հայաստան գալու, քարոզելու և նահատակվելու ժամանակի հետ: Իսկ 88-110 թվականներին, որն անհիմն կերպով հայտարարվում է թագավոր Սանատրուկի թագավորման ժամանակահատված, Թադեոս առաքյալը չէր կարող Հայաստան գալ և այնտեղ նահատակվել: Պետք է նաև շեշտել, որ Ներոնից հետո ոչ մի կայսր, այդ թվում՝ Տրայանոսը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի որևէ տիրակալ՝ քրիստոնյաների չի հալածել[43]:

Ըստ Մովսես Խորենացու նույն հաղորդման, Սանատրուկը Թադեոս առաքյալին, իր դուստր Սան-դուխտին և բազմաթիվ այլ քրիստոնյաների մահապատժի է ենթարկել Մեծ Հայքի Արտազ գավառում, մի քարքարոտ, ջրազուրկ վայրում: Նրանց մարմիններն էլ թողնվել են մահապատժի վայրում, որպեսզի, ըստ զրադաշտական կանոնի, վայրի գազաններն ու թռչունները հոշոտեն: Պատմահայրը նաև նշում է, որ այս սրբերի նշխարները նրա ժամանակ հայտնաբերվել են այն նույն վայրում, որտեղ նրանք, ըստ «նրանից առաջ պատմողների», նահատակված են եղել[44]: Մահապատժի վայրը, ըստ Մ. Խորենացու տեղեկության, եղել է քարքարոտ, անջուր: Իսկ դա նշանակում է, որ այդ վայրը կարող էր ծառայել և ծառայել է որպես մահապատիժն իրականացնելու և մահապարտների դիակներն այնտեղ թողնելու տեղ՝ դահմա: Եվ դա նույնպես այդ մահապատժի մասին տեղեկության արժանահավատության ապացույց է: Փաստորեն այդ սրբերը մահապատժի են ենթարկվել զրադաշտական թաղման ծեսով, այնպիսի քարքարոտ տեղում, որտեղ սրբազան տարերք հանդիսացող հողը և ջուրը մահապարտների արյունով պղծելը բացառված էր:

Փավստոս Բուզանդը նույնպես Տրդատ Առաջինին հիշատակում է Սանատրուկ անունով և նրան կոչում «առաքելասպան»: Բացի դրանից այս պատմիչը փաստում է, որ երբ IV դարի կեսերին պարսիկները պղծել են հայոց թագավորների հանգստարանը՝ Եփրատ գետի ափին գտնվող Անի ամրոցում և գերի տարել հայոց թագավորների ոսկորները, ապա չեն կարողացել բացել միայն Սանատրուկ թագավորի դամբարանը: Այն աչքի է ընկել հատուկ ամրությամբ[45]: Այդպիսին կարող էր լինել միայն այս հզոր թագավորի դամբարանը:

Մովսես Խորենացին նշում է նաև (գիրք 2, գլ. ԼԵ), որ Սանատրուկը (այն է՝ Տրդատ Առաջինը) Մեծ Հայքի գահին հաստատվելուց անմիջապես հետո ցանկացել է հարձակվել Եդեսիայի վրա այդ թագավորությունը Մեծ Հայքին միացնելու համար:

www.journal.lawinstitute.am

Բայց այդ ժամանակ Եդեսիայի թագավոր Անանունը մահացել է, և Եդեսիան Մեծ Հայքին է միացվել խաղաղ ճանապարհով: Այդ հաղորդումը նույնպես կարող է համապատասխանել պատմական իրողություններին և լինել ճիշտ: Դա կարող էր տեղի ունենալ և տեղի է ունեցել մինչև 54 թվականը և ոչ թե 91 թվականին, Աբգար Վեցերորդի (71-91 թթ.) թագավորման ժամանակ, ինչպես կարծում են Հայ ժողովրդի պատմության ութիատորյակի հեղինակները[46]: Չէ՞ որ այդ գլխում նշում կա այն մասին, որ Եդեսիայի գրավումը հայերի կողմից և Մեծ Հայքին դրա միացումը, Աբգար Հինգերորդի թագավորի կին Հեղինե թագուհու աքսորը Խարան, այնտեղից էլ նրա Երուսաղեմ տեղափոխվելը և սովյալներին օգնելը կատարվել է «յաւուրս Կղաւդեայ», այն է՝ Կլավդիոս (Տիբերիոս Կլավդիոս Դրուզ՝ 41-54 թթ.) կայսեր ժամանակ[47]: Իսկ քանի որ Տրդատ Առաջին-Սանատրուկը սկսել է թագավորել 51/52 թվականներից, ապա այդ ամենը կարող էր կատարել 53-54 թվականներին, բայց ոչ ավելի ուշ: Դա էլ ծանրակշիռ ապացույց է այն բանի, որ Տրդատ Առաջինը և Սանատրուկը նույն անձն է:

Հ. Մանանդյանը, Լեոն, Գ. Խալաթյանցը մեջբերում են կատարում Սուիդասի բառագրքից, որում վկայություն կա Հայոց Սանատրուկ թագավորի մասին՝ քաղված Արիանոսի «Պարթևականք» (որը չի պահպանվել- Ս.Խ.) գրքից: Եվ որի բովանդակությունը հետևյալն է. «Հայոց թագավոր Սանատրուկը, - վկայում է Արիանոսը - ուներ միջակ հասակ, բայց հակում ուներ դեպի ամեն մի մեծ բան, և, մանավանդ, դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր **արդարադատության** և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր և ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների ու հռոմեացիների մեջ»[48]: Այսպիսով, Տրդատ Առաջինը հռոմեական հեղինակներին հայտնի է եղել նաև իր Սանատրուկ անունով: Կարելի է պնդել նաև, որ այդ հատկությունները բնորոշ են եղել հենց Տրդատ Առաջին Արշակունուն: Այդ նա է, որ «…հակում ուներ դեպի ամեն մի մեծ բան, և, մանավանդ, դեպի պատերազմական գործերը»: Նա է, որ 10-12 տարի անգիջում պատերազմ է մղել հռոմեացիների, ալանների դեմ, վերակառուցել և կառուցել քաղաքներ ու տաճարներ: Եվ եթե նրանից հետո լիներ Սանատրուկ՝ թագավորող 78-110 կամ 88-110 թթ.[49], ապա նա չէր կարող աչքի ընկնել ոչ քաղաքներ կառուցելով, ոչ էլ պատերազմներ մղելով: Քանզի Հռանդեայի դաշնագրի կնքումից հետո շուրջ 50 տարի (64-114 թթ.) հռոմեացիների դեմ պատերազմներ չեն եղել և տարածաշրջանում խաղաղություն է տիրել, եթե չհաշվենք ալանների դեմ մղվող պատերազմները:

Բացի դրանից, նա կարող էր միայն, որպես զրադաշտական քրմապետ, կոչվել «հավատարիմ պահապան **արդարադատության**», ինչես որ վկայված է վերոնշված աղբյուրում: Զրադաշտության մեջ արդարադատ են կոչվում զրադաշտական Միհր, Տիր, Վահագն, Ռաշն, Սրոշ Առաքինի և այլ աստվածներ, ովքեր Չինվատ կամրջի մոտ դատում են մահացածների հոգիներին, ֆրավաշիների (հրեշտակների) գլուխ անցած պատերազմներ մղում հանուն արդարության[50]: Այս թագավորն էլ, որպես քրմապետ, զրադաշտական իրավունքի կամ արդարության երկրային պահապանն էր, այդ աստվածների անունից մարդկանց դատողը: Պետք է նշել նաև, որ մինչև Տրդատ Առաջինը, շուրջ 50-60 տարի, երկիրը մատնված է եղել քաոսի, խարխլված է եղել զրադաշտական օրինականությունը, արդարությունը, փորձեր են արվել երկրում ներդնել հռոմեական իրավունքը և այլն: Իսկ նա, որպես գլխավոր իրավարար և զրադաշտական արդարադատության երաշխավոր, վերագործարկել և ապահովել է զրադաշտական իրավական համակարգի գործողությունը, վերականգնել խախտված օրինականությունն ու արդարադատությունը: Դրա համար էլ ստացել է նաև այդպիսի պատվանուն: Նա է եղել նաև կենցաղավարության մեջ զուսպ և չափավոր, աշխարհակալ Ներոնի, նրա պալատականների վրա թողել դրական տպավորություն, և բարձր գնահատականի արժանացել հռոմեական մտավորականության այնպիսի ներկայացուցիչների կողմից, ինչպիսիք են Տակիտոսը, Արիանոսը և այլք:

Հովսեփոս Փլավիոսը հիշատակում է այս Տրդատին ալանների դեմ 72 կամ 75 թթ. պատերազմելիս՝ նրա հետ նաև՝ Մեդիայի (Մարաստանի) թագավոր, նրա եղբայր Բակուրին[51]: Սա այն Բակուրն է, որը իր եղբայր, արքայից արքա Վաղարշ Առաջինից հետո դարձել է ամբողջ Պարթևաստանի թագավոր և այդ կարգավիճակում թագավորել 75/78-110 թվականներին: Իսկ Սանատրուկ անունով որևէ հայոց թագավորի՝ թագավորած I դարի վերջին, 75/78 թվականներից հետո՝ Փլավիոսը չի հիշատակում:

Այնուհետև Մ. Խորենացին նշում է, որ Սանատրուկը թագավորել է սկսել պարսից Արտաշես թագավորի 12-րդ տարում («Սա թագաւորեալ յերկոտասաներորդի ամի Արտաշիսի արքայի պարսից, կեցեալ ամս երեսուն՝ մեռեալ յորսի, նետի ուրուք դիպեալ փորոտեացն…»): Նա վիրավորվել է որսի ժամանակ արձակված պատահական նետից[52]: Ամենայն հավանականությամբ պարսից Արտաշես թագավորը դա Արտավան կամ Արտաբան

Բ-ն է, որը, ըստ Ն. Դիբվոյզի թագավորել է 11-38 թթ.[53], ըստ Է. Բիկերմանի՝ 10-ից մոտ 38 թթ.[54], իսկ ըստ Հ. Մանանդյանի և Լեոյի տվյալների՝ 11-40 թթ.[55]: Տրդատ-Սանատրուկը, ինչ-պես ասվել է, Մեծ Հայքի թագավոր է օծվել և իրավաբանորեն դարձել լեգիտիմ թագավոր 51/52 թվականներին: Եվ նա չէր կարող թագավորել այդ պարսիկ թագավորի 12-րդ տարում՝ այլ նրա թագավորելը դադարելուց 12 տարի հետո: Ըստ երևույթին, Մովսես Խորենացին, իր ժամանակի սովորության համաձայն, այս թագավորի թագավորման ժամկետին է միացրել նրանից հետո և մինչև Վաղարշ Առաջինը թագավորած աննշան թագավորներ Վարդան Առաջինի (39-45 թթ.) և Գոթարզ Երկրորդի (43-50 թթ.) թագավորման տարիները, որոնք իրար հետ կազմում են մոտ 12 տարի: Այդ դեպքում մոտավորապես կստացվի Տրդատ Առաջին-Սանատրուկի թագավորելու սկզբնատարին՝ 51/52 թվականները:

Որ Սանատրուկ անունը Տրդատ Առաջինի անուններից մեկն է, հիմնավորվում է նաև Գառնիի հայտնի հունարեն արձանագրությամբ: Դրա բովանդակության և պատվիրատուի անձի շուրջ բանավեճերը մինչև այժմ չեն դադարում: Տարբեր հեղինակներ այն թարգմանում և մեկնաբանում են տարբեր կերպ[56]: Դրանցից մեկը Հ. Մանանդյանի թարգմանությունն է՝ ներկայացված նրա համապատասխան աշխատության մեջ[57]: Ճիշտ է, դրանում՝ հետևելով Մովսես Խորենացուն (սա այն հազվագյուտ դեպքերից է, երբ Պատմահայրը սխալվում է) նա այդ արձանագրությունը վերագրում է Տրդատ Երրորդ Մեծին և ոչ թե Տրդատ Առաջինին, բայց նրա այդ կարծիքն այս դեպքում էական նշանակություն չունի: Այդ արձանագրությունը նա թարգմանել է հետևյալ կերպ. «**Հելիոս Տիրիդատես** թագավորը Մեծ Հայաստանի, իշխելով որպես գերագույն տեր՝ վերստին կառուցեց տաճարը, անհաղթելին, իր քրոջ արքայադստեր համար մեծաշուք թագուհու խնդրանքով: Շենքի հովանու ներքո սպասավորողը թող **երգեր խորհեն մեծ սրբին**, նաև **զոհության** ավետարանման համար»[58]: Հետագայում Հելիոս անունը նա փոխարինել է Էլիոս անունով, գտնելով, որ այդ հռոմեական անունը Տրդատ Երրորդը կարող էր ստացած լինել Հռոմում գտնված ժամանակ: Բայց այդ Էլիոս (Aelius) անունը բոլորովին էլ հռոմեացու սովորական անուն չէ, ոչ էլ այն կարելի է կարդալ որպես «Տիրան-Տրդատ», կամ համարել «Տիրան» անվան խորհրդանիշ, ինչպես ենթադրում է նա[59]: Հելիոս անվան տակ հունական դիցաբանության մեջ ենթադրվել է արևի աստվածը, երբեմն՝ Ապոլոնը, երբեմն՝ Զևսը, իսկ Հռոմում՝ նաև Միհրը: Հայտնի է, որ հռոմեական կայսր Հելիոգոբալը (218-222 թթ.) եղել է միհրական և ժամերով պարել նրա բագինի առջև: Կայսր Ավրելիանոսն էլ (270-275 թթ.) Հռոմում կառուցել է Արևի (Միհրին նվիրված) տաճար և նրան հռչակել համահռոմեական աստված[60]: Որ զրադաշտական քրմերը ծիսական պարեր են պարել արևի առջև՝ վկայում է Եղիշեն իր «Վարդանի և հայոց պատերազմի մասին» և «Բան խրատու յաղագս միանձնաց» (գլուխներ 5, 21) աշխատություններում[61]: Իսկ հայկական զրադաշտական պանթեոնում այդպես կարող էր կոչվել Արամազդը, Միհրը կամ նույնիսկ՝ Տիրը: Այդ տեսակետից ճշմարտությանն ավելի մոտ է կանգնած Ստ. Լիսիցյանը, որը «Հելիոս» բառը թարգմանել է որպես «Արև»[62]:

Այս արձանագրության մեջ Տրդատ Առաջինը իրականում կոչվում է Հելիոս-Տիրիդատես, այն է՝ Սանատրուկ (Արևորդի, Արևատուր)-Տիրիդատ: Եվ այդ կրկնակի անվան մեջ միավորված ու արտահայտված են նրա մարմնավորած հոգևոր և աշխարհիկ իշխանությունը՝ հաստատագրված, ընդունված ինչպես զրա-դաշտական հոգևոր կառույցի, այնպես էլ արտաքին ու ներքին աշխարհական իշխանությունների ու ժողովրդի կողմից: Նրա անունը եղել է և Սանատրուկ, և Տրդատ (Տիր աստծու անունից դատող կամ Տիրի տված): Եվ շատ հնարավոր է, որ այդ անունների զուգակցման միջոցով շեշտվել է նաև Արամազդ աստծու կամ վերջինիս ընտանիքի որևէ անդամից նրա և նրա արքայատոհմի սերած լինելու հանգամանքը: Այստեղ գրանցված է այն «իրողությունը», որ նա «դիցախառն» Արշակունի է: Իր տոհմի հնության ու փառավորության, ինչպես նաև զրադաշտական հավատի կատարելության մասին նա հիշեցնում էր նաև Ներոն կայսրին և հռոմեացի երևելիներին՝ Հռոմում գտնված ժամանակ: Իրեն «դիցախառն» է կոչում նաև Տրդատ Երրորդ Մեծը՝ իր հակաաղանդավորական հրամանագրերից մեկում[63]: Բայց վերջինս ոչ մեկի կողմից Սանատրուկ չի կոչվում՝ Արտաշես անունով որդի էլ չի ունեցել:

Սանատրուկի կողմից Գառնիում կառուցած տաճարն էլ կարող էր նվիրված լիներ զրադաշտական աստվածներից Արամազդին կամ Միհրին: Ըստ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքի բարի արարածներին, աշխարհն ու տիեզերքը, ինչպես նաև արևն արարվել է Արամազդի կողմից, Ահրիմանի աջակցությամբ[64]: Միհր դիցը, ըստ Ավեստայի «Միհր-յաշտի» 125-126 տների, ամեն օր իր ոսկյա մարտակառքով ուղեկցում է արևին՝ արևածագից մինչև մայրամուտ: Տիր, Վահագն, Ռաշն և այլ դիրք ու բազում ֆրավաշիներ էլ ուղեկցում են Միհրին ու արևին[65]: Դրա համար էլ Տրդատ Առաջինը, որպես

այս աստվածների շառավիղ, արևին նույնպես ուղեկցող, արևի տված և Միհր աստծո քուրմ կարող էր կոչվել Հելիոս-Սանատրուկ: Առանց իր թագավորական իշխանության նման հիմնավորման ու լեգիտիմացման Արևելքում թագավորել հնարավոր չէր:

Գառնիի արձանագրությունից նաև հայտնի է դառնում, որ նա, որպես ուղղադավան զրադաշտական և քրմապետ, ըստ խեթուկդասի օրենքի, ամուսնացած է եղել իր արքայադուստր քրոջ հետ, որի ցանկությամբ էլ կառուցել է տվել նշված տաճարը: Իսկ իր աղջիկ Սանդուխտին նա կարող էր մահապատժի ենթակել ոչ միայն քրիստոնյա դառնալու, այլև այն բանի համար, որ նա՝ քրիստոնյա դառնալով, զրկել է իրեն նրա հետ ամուսնանալու հնարավորությունից: Նա նույնիսկ պարտավոր էր ըստ այդ օրենքի ամուսնանալ Սանդուխտի հետ[66]: Բարքերն էին այդպիսին:

Ինչ վերաբերում է արձանագրության վերջին՝ «Շենքի հովանու ներքո սպասավորողը թող երգեր խորհե մեծ սրբին, նաև **զոհության** ավետարանման համար» տողին, ապա դա նշանակում է, որ իսկապես էլ Գառնիում նրա կառուցածը եղել է զրադաշտական տաճար-կրակարան: Այնտեղ սպասարկող մոգը պետք է երգեր և երգելով ավետարաներ «մեծ սրբին», ըստ երևույթին՝ Միհրին: Ավետարան կոչվել է Ավեստան, որի աղոթքները և յաշտերը երգվել են, և դրանց միջոցով գոհություն է ավետվել[67]: Պետք է նշել, որ Ավեստայում երկրային տաճարը և զրադաշտական երկնային արքայությունը կոչվել են նաև «Գովեստի տուն», «Երգեցողության տուն»: Դրանում բազմիցս գովեստներ են հնչում Ահուր-Մազդի, Միհրի և այլ դիցերի հասցեին (Ավեստայի «Աղոթք խոսքի մասին», «Դուալիզմի դոկտրինա», «Քարոզ հարցերի ձևով», «Նախաբանի ֆորմուլա» գաթաներում, «Օրմազդ-Յաշտ», «Միհր-Յաշտ», «Հոգու բախտը մահվանից հետո» յաշտերում և այլն)[68]:

Ամփոփելով շարադրվածը, բերված ապացույցների հիման վրա կարելի է գալ եզրակացության, որ Տրդատ Առաջինը և Սանատրուկը իսկապես էլ նույն անձն է և Մեծ Հայքի այն թագավորը, որն իրավաբանորեն թագավորել է 51/52-75/81 թթ. (բայց ոչ մինչև 88 թվականը, ինչպես կարծում են որոշ հեղինակներ[69]): Նրա թագավորելը երբեմն և փաստացի ընդհատվել է ժամանակի մեջ: Նա Հայոց թագավոր է օծվել Պարթևաստանի ատյանի կամ «թագավորներ կարգող» մոգերի ու ազգականների խորհրդի (ատյանի) կողմից[70], 51/52 թթ.: Եվ դա՝ այն նույն ժամանակ, երբ նրա եղբայր Վաղարշակ Առաջինը օծվել է ամբողջ Պարթևաստանի, իսկ մյուս եղբայրը՝ Փաքորը կամ Բակուրը՝ Մարաստանի թագավոր[71]: Տրդատ Առաջին-Սանատրուկի թագավորման իրավունքը վերջնականորեն հաստատվել է Հռանդեայի պայմանագրով և նրա իշխանությունը լիարժեքորեն լեգիտիմացվել է: Բերված ապացույցներով նաև հերքվում է այն արհեստական-հնարովի տեսակետը, ըստ որի Մեծ Հայքում 1-ին դարի վերջում և 2-րդ դարի սկզբում թագավորել է Սանատրուկ անունով ոմն Հայոց թագավոր:

---

[1] Սպիրկին Ա. Ս., Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Երևան, 1970, էջ 367-370, Բրուտյան Գ. Ա., Տրամաբանություն, Երևան, 1957, էջ 243-282, 397-403, 404-437: Гетманова А. Д. Логика для юристов. М., “Омега-Л”, 2009, с. 156-176, 236-288, 328-343; Тер-Акопов А.А. Юридическая логика. М., “Омега-Л”, 2002, с. 123-159; Ивин А. А. Основы логики оценок. М., 1970, с. 213-240; Он же: Основы теории аргументации. М., “Владо”, 1997, с. 7-15, 27-104, 150-232; Кириллов В. И., Старченко А. А. Логика. М., “Проспект”, 2008, с. 171-202, 213-227. Гельдибаев М.Х., Вандышев В. В. Уголовный процесс. М., “Юнити-Дана”, 2012, с. 115-155; Белкин А.Р. Теория доказывания в уголовном судопроизводстве. М., “Норма”, 2005, с. 29-84,176-299.

[2] Тацит Корнелий. Сочинения в двух томах, т. 1 /Анналы/, СПб., 1993. Дион Кассий. Римская история, кн. VXIV–LXXX. Перевод с древнегреческого. Под ред. А.В. Махлаюка; комментарий и статья А.И. Махлаюка, СПб., 2011.

[3] Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ, Ե., 1945, էջ 28–29, 32–34: Մելքոնյան Հ.Գ.,

Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Ե., 1980, էջ 130–133, 139–140: Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Ե., 1966, էջ 181: Ֆէթթեր Պ., Հայկական աշխատասիրութիւնք, Վիեննա, 1895, էջ 124 (թարգ. և ծանոթ.՝ Հ. Տաշեանի):

[4] Շահինյան Լ., Հայաստանը և առաջին Արշակունիները, Ե., 1993, էջ 232–233:

[5] Դարագաշեան Ա.Մ., Քննական պատմութիւն հայոց, մասն Բ (Արշակունիք ի ժամանակի հեթանոսութեան), Թիֆլիս, 1895, էջ 242: Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Ե., 1944, էջ 115, 118–124:

[6] Աստուրեան Յ., Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ, Վենետիկ, 1912, էջ 13–15: Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Ե., 1945 էջ 326–357: Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Ե., 1957, էջ 5–20, 433: Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1966, էջ 347, 354, 357, 517: Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 387–388:

[7] Լեո, նշվ. աշխ., էջ 347, 354, 357, 517:

[8] Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 387–388:

[9] Ժամկոչյան Հ.Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ստ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե., 1963, էջ 230–239:

[10] Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran, Leipzig, Heft 2, 1905, էջ 33–34:

[11] Մանանդյան Հ., նշվ, աշխ., հ. Բ, էջ 14, 15, 16, 18, 19, 35, 50, 51, 57:

[12] Նույն տեղում, էջ 14:

[13] Հմմ. Дион Кассий, նշվ, աշխ., էջ 119:

[14] Տե՛ս նույն տեղում, էջ 119:

[15] Շահինյան Լ., նշվ. աշխ., էջ 382:

[16] Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 59, 150:

[17] Նույն տեղում, էջ 65:

[18] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե., 1971, էջ 730–733, 735–764:

[19] Նույն տեղում, էջ 766: Տես նաև՝ Աստուրեան Յ., նշվ. աշխ., էջ 198:

[20] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 766:

[21] Նույն տեղում, էջ 765: Տես նաև՝ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 115-123:

[22] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 188, 190:

[23] Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Երևան, 1942, էջ 392-393:

[24] Justi F., Iranisches Namenbuch, Marburg, 1985, S. 282-283.

[25] Моммзен Т. История Рима, т. 4, Ростов-на-Дону, 1997, С. 254-255:

[26] Wolff F., Avesta–Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae,s Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, S. 325-332.

[27] Արշակունիներին «դիցախառն» է կոչում Տրդատ Երրորդ Հայոց թագավորը՝ իր հակաաղանդավորական հրամանագրերից մեկում: Տե՛ս, Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983, էջ 80:

[28] Тацит Корнелий, նշվ. աշխ., XV. 24, էջ 230:

[29] Սվետոնիոս, Տասներկու կեսարների կյանքը, Ե., 1986, էջ 210:

[30] Степанян А.А. Рандейский договор и коронация Тиридата Аршакида в Риме (Պատմաբանասիրական հանդես, 1961, N 1-2, էջ 171-183):

[31] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 759: Դարագաշեան Ա.Մ., նշվ. աշխ., էջ 240:

[32] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 759:

[33] Արտա Վիրապ Նամակ, պահլավերենից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Ե., 1958, էջ 76, 88:

[34] Այն հարցը, որ նշված ժամանակ Մծբինը եղել է Մեծ Հայքի մայրաքաղաքը, որ Սանատրուկն այն նորոգել է երկրաշարժից հետո և այլն՝ հայոց պատմագրության մեջ անհիմն կերպով վիճարկվում է: Որոշ հեղինակներ պնդում են, որ Մ. Խորենացու գրքում խոսքը ոչ թե Մծբին, այլ Մծուրն քաղաքի մասին է: Այնինչ, այս թագավորը, ըստ Մ. Խորենացու, վերականգնել է երկրաշարժից տուժած Մծբինը և կառուցել Մծուրն քաղաքը: Նա հավատավոր զրադաշտական էր և կործանված քաղաքները վերականգնելը, նորերը կառուցելը, (ինչպես նրանից առաջ վարվել են նաև Վաղարշակ Առաջինը, Արտաշես Առաջինը, Տիգրան Մեծը), նրան, որպես զրադաշտական տիրակալի, պարտադրվել է Ավեստայի «Աշխարհագրական պոեմ», «Յիմա», «Հողը (երկիրը)» ֆրակարդների պարունակած նորմերով: Ինչ վերաբերում է Մծուրնին, որը գտնվել է զրադաշտականի համար սրբազան Եփրատի ամենանշանակալից հատվածում՝ Արածանի և Մեղրագետի խառնման տեղում, ապա այն, անկասկած, կառուցել կամ վերակառուցել է այս թագավորը: Ըստ Ավեստայի, «Արդվի Սուր կամ Աբան յաշտի» 101-րդ տան Արդվի Սուր, այն է՝ Եփրատ սրբազան գետի (և ոչ թե ԱմուԴարիայի) և մեկ այլ գետի խառնվելու մոտ (проток) պետք է կառուցված լինեին «հարմարավետ տներ՝ հարյուր լուսամուտներով, փայլուն, հազարայուն»: Այդ մասին տե՛ս, Wolff F., նշվ. աշխ., էջ 178; Авеста в русских переводах (1861–1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И.В. Рака, СПб., 1998, с. 217): Իրականում էլ Եփրատի ափերը պատված են եղել քաղաքներով, սրբավայրերով ու տաճարներով, և այս թագավորն անմասն մնալ այդ գործընթացներից չէր կարող:

[35] Մովսես Խորենացի, էջ 188:

[36] Тацит Корнелий. Анналы. Малые произведения. История, М., 2003, С. 81.

[37] Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 761:

[38] Սեբէոս եպիսկոպոսի պատմութիւն, Ստ. Մալխասյանցի խմբ. և ծանոթ., Ե., 1979, էջ 11:

[39] Մովսես Խորենացի, նշվ. Աշխ. էջ 176:

www.journal.lawinstitute.am

[40] Дибвойз Н.К. Политическая история Парфии. Пер. с англ., науч. ред. и библиографич. приложение В.П. Никонова, СПб., 2008, С. 153.
[41] Ренан Э. Антихрист, СПб., 1991, С. 493.
[42] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 9–11:
[43] Грант М. Римские императоры. Биографический справочник правителей Римской империи. 31 г. до н.э. - 476 г. н.э., М., 1998, с. 67–95.
[44] Մովսես Խորենացի, նշվ. աշխ. էջ 184:
[45] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 12, 180, 222:
[46] Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 766, 925:
[47] Մովսես Խորենացի, էջ 188:
[48] Մանանդյան Հ., Քննական տեսություն, հ. Բ, էջ 15: Լեո, Հայոց պատմություն, հ. 1, էջ 15, 357: Халатянц Г. Армянский эпос в истории Моисея Хоренского, М., 1896, с. 180:
[49] Մանանդյան Հ., Քննական տեսություն…, հ. Բ, էջ 14-15, 433:
[50] Արտա Վիրապ Նամակ, էջ 51:
[51] Иосиф Флавий. Иудейская война. Пер. с древнегреческого М. Финкельберга и А. Вдовиченко, под ред. А. Ковельмана, кн. 7, М., 2008, гл. 4, с. 431.
[52] Մովսես Խորենացի, էջ 178:
[53] Дибвойз Н.К., նշվ. աշխ., էջ 150:
[54] Бикерман Э. Хронология древнего мира, М., 1975, с. 197:
[55] Մանանդյան Հ., Քննական տեսություն, հ. Բ, էջ 64, 433: Լեո, նշվ. աշխ., էջ 342:
[56] Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Ե., 1946, էջ 3–8: Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, էջ 132, 134: Նույնի՝ Երկեր, հ. Բ, Ե., 1978, էջ 136: Առաքելյան Ա.Գ., Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմություն, Ե., 1959, էջ 45-46: Тревер К. В. Очерки по истории культуры древней Армении (2-ой в. до н.э. - 4-ый в. н.э.), Е., 1953, с. 187.
[57] Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը..., էջ 8:
[58] Մանանդյան Հ., Նույն տեղում:
[59] Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Ե., 1987, էջ 136:
[60] Грант Майкл, նշվ.աշխ., էջ 152-156, 211-217:
[61] Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, էջ 62, նույնի՝ Բան խրատու յաղագս միանձնաց//Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 141-147:
[62] Ստ. Լիսիցյանի կողմից նշված արձանագրության թարգմանած տեքստը տե՛ս, Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը…, էջ 5:
[63] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 486: Խաչատրյան Ս. Ա., Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգի-ական վերլուծությունը, Ե., 2010, էջ 46–49:
[64] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1994, էջ 112, 114:
[65] Wolff F., նշվ. աշխ., էջ 218, Авеста в русских переводах (1861-1996), էջ 304:
[66] Սուքիասյան Ա.Գ., Հին իրանական իրավունքը ըստ «Սասանյան Դատաստանագրքի», Ե., 1980, էջ 41–62:
[67] Խաչատրյան Ս.Ա., Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Ե., 2010:
[68] Авеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Санкт Петербург, 1998, с. 126-128, 135-137, 160-161, 162, 166, 269, 323, 411.
[69] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 724:
[70] Моммзен Т. նշվ. աշխ., էջ 254–255:
[71] Այն փաստը, որ, ըստ Տակիտոսի, 61 թվականին, Մեծ Հայքի ազատագրման համար հերթական արշավանքը սկսելուց առաջ, Մծբինում Վաղարշակ Առաջինը Տրդատ Առաջին-Սանատրուկի գլխին թագ է դրել՝ ապա դա եղել է ոչ թե թագավոր օծելու, այլ ընդամենը թագ նվիրելու ծես և Մեծ Հայքն ազատագրելու վճռականության ցուցադրում: Դրանով միայն վերահաստատվել է նրա հայոց թագավոր, և այդ ժամանակ Մեծ Հայքում թագավորող Զենոն-Արտաշեսի ապօրինի թագավոր լինելու հանգամանքը: Երևի այդ թագն է, որը Երվանդին հաղթելուց հետո նրա գանձարանում գտել, և Արտաշեսի գլխին է դրել թագադիր ասպետ Սմբատ Բագրատունին:

Самвел Хачатрян
Преподаватель Гаварского государственного университета,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Об идентичности личностей армянского царя Тиридата Первого и Санатрука
(исследование правовыми и логическими способами и методами)

На основе свидетельств римских историков Тацита, Диона Кассия и других в армянской историографии утверждается, что в середине I-го века н.э. в Великой Армении царствовал брат парфянского царя Вологеза Первого (51-75/78 гг.) Тиридат Первый Аршакуни (54/66-75/88 гг.). Считается, что у него был сын по имени Санатрук, который унаследовал армянский трон после отца. Его царствование датируется концом I - началом II вв., примерно 75/78-110, или 88-110 годами.

В «Истории Армении» Мовсеса Хоренаци, армянского историка V в., Тиридат Первый не упоминается; об этом армянском царе не находим упоминаний и у римских историографов Тацита, Диона Кассия и др. М. Хоренаци называет царем Великой Армении Санатрука, которого считает родственником армянского царя Абгара.

В данной статье доказывается, что имя «Санатрук» было вторым именем Тиридата Первого и что он и Санатрук – одно и то же лицо. Другого царя по имени Санатрук, царствовавшего после Тиридата Первого, не было.

Ключевые слова: *Тиридат Первый, Санатрук, Нерон, Гарнийская греческая надпись, Великая Армения, Парфия, Римская империя.*

Samvel Khachatryan
Candidate of Legal Sciences, Assocate Professor,
Gavar State University of Armenia, Lecturer

SUMMARY

On the identity of personalities of the Armenian king Tiridates I and Sanatruk
(a study by legal and logical methods)

According to Armenian historiography and based on the testimonies of the Roman historians Tacitus, Dio Cassius and others, in the middle of the 1st century AD Armenia was reigned by Tiridates I of Arsacid dynasty (Arshakuni) (54/66-75/88), who was the brother of the King of Parthia Vologases I (51-75/78). It is believed that Tiridates had a son named Sanatruk, who had inherited the Armenian throne from his father. Sanatruk is believed to have reigned in the late 1st and early 2nd centuries (75/78-110 or 88-110).

Unlike the Roman historians Tacitus, Dio Cassius and others, the Armenian historian of the 5th century Movses Khorenatsi does not mention Tiridates I in his “History of Armenia” and states that during that period the King of Great Armenia was Sanatruk who, according to him, was the relative of the Armenian King Abgar.

In this article we prove that the name “Sanatruk” was the second name of Tiridates I and that those two people were the same person. There was no other king named Sanatruk who reigned after Tiridates I.

Key words: *Tiridates I, Sanatruk, Neron, Garni’s Greek inscription, Great Armenia, Parthia, Roman Empire.*